

Մեր խիկարը յուսահատած,  
 Եթէ զուք ինձ հաւատար,  
 (Զի հեղինակ միշտ այդ կերպով  
 Կընկնի սաստիկ կըրքի տակ).....

Վըրթովեցաւ

Կրրակ դարձաւ:

Զը մըտածած

Վըճոեց յանկարծ ....

Կաղամարին մէջ խառնեց  
 Թանաքին հետ մըկընդեղ,  
 Այդ օրէն վերջ թունաւոր  
 Գրըշով կզրէր ամեն հեղ,  
 Եւ ինչպէս որ կը կարծէր,  
 Եկան չար ընթերցողներ,  
 Թէպէտ կըրծել ըսկըսան,  
 Բայց ամենքն ևս ճաթեցան ....  
 Շատ բարի է, կասէք զուք,  
 Գրըօղն ունի իրաւունք,  
 Բայց ես այդպէս չեմ դատեր:  
 Այդ խօսքին ձեռք չեմ ղըներ:  
 Զըկայ գիրք մի վատ կամ աղեկ,  
 Որ կըրծըված չլինի երբէք,  
 Սորա համար հարկ չէ կարծեմ  
 Որ գրըիչ թոյնով թաթխեն ....

ԱՌԱՔԵՆԻ ԶԱՐԱՆԵՐԱՆ:

ՍԷՖԵՐՈՎԻ:

## ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վարակիչ հայդախան հիւանդոս-իւններ:

### I

Բն-իւն ծ-դիլ թոյնը սաստիկ վարակիչ է, և ոչ մի հասակ վարակվելուց աղատ չէ, յայտնի է որ արգանդի մէջ անգամ մանուկը կարող է վարակվել իւր մօլից: Դիտողութիւններից երևում է որ զէպի ծաղկի թոյն ունեցած տրամագրութիւնը երբեմն թուլանում է և կամ բոլորովին անհետանում, որովհետեւ կան անհատներ, որոնք թէպէտ գտնվում են շարունակաբար այդ թոյնի ազդեցութեան տակ, բայց չեն վարակվում: Մի անգամ ծաղկով հիւանդացողը կորցնում է իւր տրամագրութիւնը կրկին հիւանդանալու կամ բոլորովին և կամ բաւական երկար ժամանակ, Ծաղիկը փո-



խաղրվումէ հիւանդներից առողջներին ուղղակի կամ անուղղակի միջոցներով: Հաստատ յայտնի է, որ ծաղկի վարակիչ կաչողական յատկութիւնը նորա բշտկի մէջն է բովանդակվում, նորա ներգործութիւնը աւելի խիստ է, երբ այդ բշտկի առաջուց պարզ բովանդակութիւնը սկսվումէ պղտորվել թէպէտ և չորացած բշտիկներն անգամ վարակիչ զօրութիւն ունին, որոնք հին ժամանակ ծաղիկ պատուաստելու համար էին գործ դրվում: Դեռ յայտնի չէ խուխի մէզի և թուքի վարակիչ յատկութիւնները. վարակվել կարելի է ոչ թէ միայն հիւանդից, այլ և նորան շրջապատող իրերից, թէպէտ և թոյնի վարակիչ զօրութիւնը պակասումէ, քանի որ հեռանումէ հիւանդից: Ծաղկին տրամադրված անհատները աւելի շուտով են վարակվում: որքան նոքա երկար միջոց հիւանդի մօտ են լինում, որքան հիւանդի բնակարանը փոքր է և որքան բնակարանում հիւանդների թիւը շատ է, հիւանդը կարող է վարակիչ նիւթ առաջացնել դեռ ևս հիւանդութեան յատկական նշանն չերևեցած միջոցին, օրինակ ծաղկով հիւանդանալու այն դէպքերը, երբ հիւանդները դժուարանում են բացատրել վարակման աղբիւրը: Ծաղկի թոյնը բաւական երկարատե է, եթէ արտաքին ազդեցութիւններից պատսպարված է, իսկ եթէ մթնոլորտ օդի ազդեցութեան տակ է, նա իւր վարակիչ ընդունակութիւնը կորցնումէ, երևի շատ անօրացած լինելու պատճառով: Վարակիչ թոյնը բնաջինջ է լինում սաստիկ տաքութենից, քլորի, ծծումբի, եօդի գոլորշուց և կամ ալկօօլից (սպիրտ). դորա համար հարկաւոր է այդ թոյնամաքիչ (дезинфицирующей) նիւթերով երկար ներգործել վարակված առարկաների վերայ: Ծաղկի վարակումն հաւանական է որ շնչառութեան ճանապարհով է կատարվում, և յիրաւի որ այդ եղանակով վարակումն կարող է հեշտ պատահել, որ և հաստատումէ հին 2ինացիների ծաղիկ պատուաստելու սովորութիւնը. նոքա ծաղկի բշտկի կեղերը քթի մէջ էին խցում, վարակումը շուտով յայտնվում էր: Ծաղիկը կարող է երևիլ կամ թեթեւ և կամ սաստիկ աւերիչ ճարակմունքով. շատերը հաստատում են որ իւր ծաղկի համաճարակմունք կրրկնվում են նշանաւոր ժամանակներում (12—15 տարի) կանոնաւոր մատեմատիկական ճշգրտութեամբ: Այսպէս թէ այնպէս, պէտք է ասել, որ ծաղկի համաճարակմունքը պարբերաբար են երևում, որ իրաւի նշանաւոր կապ ունի այն հանգամանքի հետ, թէ կան արդեօք դէպի վարակում տրամադրված անհատներ թէ ոչ: Ծաղկի համաճարակման յատկութիւնները շատ զանազան են լինում, Վիճակագրական տեղեկութիւնները համոզում են, որ ծաղկահատութեան գործ դրելուց սկսած, համաճարակման երկիւղը բաւական թուլացաւ, Թէպէտ պէտք է յիշել, որ այժմ ևս պատահում են մեծ համաճարակմունք, ինչպէս 1871—1872 թ. համաճարակումն էր: Սև ծաղիկը (variola haemorrhagica) մի փոքր բացառութեամբ, միշտ մահադիմ հետեանքներ ունի: Մանուկները ծաղկից աւելի են մեռնում, քան թէ հասակաւորները: Կուրջման ասումէ, որ տասն տարեկանից ծաղկով հիւանդացող մանուկներից կէսը մեռնում են:



## II

Այն փաստը որ մարդ մի անգամ մի որևիցէ վարակիչ կաշողական ցաւով հիւանդացած լինելով շատ թէ քիչ աղատւում է մի և նոյն հիւանդութեամբ կրկին վարակվելուց, պատճառ է դարձել ծաղկահատութեան գործադրութեան, Հին լուսաւորված ազգերին յայտնի էր, որ մարդը միանգամ ծաղիկ հանելուց յետոյ, կորցնում է կամ նուազում է նորա ընդունակութիւնը, կրկին ծաղկով վարակվելու, Ինչպէս և իցէ երկրորդ անգամ պատահած վարակումն անցնում է բաւական թեթեւ կերպով, սորանից երևում է որ մարդի կազմեալքը փոքր առ փոքր թոյնին ընտելանում է և կորցնում է կամ նուազում է նորա տրամադրութիւնը դէպի վարակիչ թոյնը:

Այդ պատճառով շատ բնական է, որ մարդիկ դեռ հին ժամանակներում աշխատում էին արհեստական ձևով բնական ծաղիկը պատուաստել (инкуляция) ցանկանալով թեթեւ ծաղիկ ունենալ և դորանով պահպանել մարդին առաջիկայ սպասելի վարակումից և ծանր հիւանդութիւնից, Զինացիներ սովորութիւն ունէին իւրեանց մանուկներին ծաղկի թոյնով լրցված շապիկներ հագցնել և կամ քթի մէջ ծաղկի բշտիկ կեղևները խցել, Արևելեան Հնդկաստանում բնական ծաղիկ պատուաստելն սովորութիւն էր դարձել և բրամինների ձեռքի տակ էր և գործ էր անվում իբրև մի կրօնական արարողութիւն և դորա պատճառով շատ տարածված էր, Այդ տեսակ ծաղկահատութիւնը կովկասեան երկիրներում ևս ընդունված էր, համարեայ Ասիայի բոլոր հին ազգերը միմեանցից անկախ այդ միջոցով աշխատում էին ազատվել ծաղկի սաստիկ համաճարակումից:

Մինչև XVIII դարը, բնական ծաղկի պատուաստելու տեղեկութիւնները Եվրոպայում սակաւ են, միայն յայտնի է, որ 1720 թ. Եվրոպայի հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց զորա վերայ լէզի Մօնտեզիւ, Վոստանդնուպօլսի անգլիական դեսպանի ամուսինը, Նա տեսնելով բնական ծաղկի պատուաստելու բարենպատակ աղղեցութիւնը, պատուաստել տուեց նորան իւր զաւակներին, այն ժամանակից սկսած բնական ծաղկի պատուաստելն (ինօկուլացիա) տարածվեցաւ Անգլիայ, Շվեյցարիա և Լիֆլանդիայ, ուր համարվում էր միակ ծաղկի դէմ պաշտպանողական միջոց, Ի հարկէ այդ տեսակ միջոցը բաւական երկիւղալի էր և նորա առողջապահական ազատիչ ներգործութիւնը կասկածելի էր, որովհետև պատուաստվողներից շատերը մեռնում էին, և բացի դորանից այդ եղանակով արհեստական կերպով ծաղկի թոյնը ահագին քանակութեամբ տարածվում էր, պէտք է ենթադրել համաձայն գօկտօր Բօնի, որ միայն ծաղկից առաջացած անսահման զարհուրանքը կարողանում էր մարդկութիւնը ստիպել այդ տեսակ երկիւղալի միջոցն յօժարակամ գործ զնել:

Թէպէտ առողջապահական կողմից այդ միջոցը հերքվում է, բայց ինչ և իցէ բնական ծաղկի պատուաստելն ևս իւր օգտաւէտ հետեանքներն ունեցաւ, նա պարզ ցոյց տուեց, որ կարելի է երկիւղալի հիւանդութեան



առաջն առնել արհեստական կերպով թեթե հիւանդութիւն պատճառելով, այս փաստը նպաստեց հասարակութեանը ընդունելու և ճիշդ հասկանալու պատահմամբ գտած առողջապահական ծաղկահատման եղանակը, որի մասին այժմ կխօսենք:

Ծաղկահատման խնդիրը մեծ քայլ առաւ անցնալ 90 թուականներին, երբ հաստատապէս յայտնվեցաւ, որ կովերի ծծերի վերայ առաջացած ծաղիկը (вакцина), մարդիկներին պարտուստոված լինելով, պաշտպանում է բնական ծաղկի վարակումից: Սորանից առաջ ևս յայտնի էր, որ պատահմամբ կովի ծաղկով վարակված մարդիկ բնական ծաղկով այլ ևս չէին հիւանդանում, մինչև անգամ սաստիկ համաճարակմունքի ժամանակն ևս:

Առաջին անգամ դիտմամբ կովի ծաղիկ պատուաստեց Անգլիայում կալուածատէր Բէնիամին Զէստի, որն առաջուց ինքն իր վերայ փորձելով կովի ծաղկի պահպանողական զօրութիւնը, պատուաստեց 1794 թ. կովի ծաղիկը իւր ամուսնուն և երկու զաւակներին: Նորանից յետոյ բժիշկ Էդուարդ Զէնբըրը հաստատեց, որ մարդկային մարմնի վերայ կովի ծաղիկ \*) պատուաստելուց յետ առաջացած բշտիկներ պարունակումեն թոյն (гуманизированная лимфа), որ մի և նոյն պաշտպանողական յատկութիւն ունի, ինչպէս և նախկին կովի ծաղկի բշտիկ բաղադրութիւնը: Բայց շնայելով դորան, քանի մի տէրութիւններ կասկածում էին կովի ծաղիկ պատուաստման մասին: Մինչև 1840 թ. Անգլիայում մարդի ծաղիկ պատուաստումն բաւական գործ էր դրվում: 1838 թ. աւերիչ ծաղկի համաճարակումից յետ, Անգլիայի կառավարութիւնը համոզվելով մարդկային ծաղկի պատուաստման վատ հետեանքների մասին, արգելեց բոլորովին: Շվեդիայն Անգլիայից առաջ օրէնքով հրամայեց մարդկային ծաղիկ պատուաստող բժիշկներին զրկել բժշկական իրաւունքներից: Միւս եվրոպական տէրութիւնները արդէն սկսել էին կովի ծաղիկ պատուաստելն, բայց պէտքէ ասել, որ ամենայն տեղ, բացի Շվեդիայից, ծաղկահատութիւնը թող էր տարածվում և վերջին 1870—1872 թ. ծաղկի մեծ համաճարակումն ստիպեց մի քանի տէրութիւններին աւելի եռանդ գործել և հասարակութիւնը համոզել ծաղկահատութիւնը պարտաւորված կատարելու, այժմ ևս պարտաւորեալ ծաղկահատութեան դէմ հակառակորդներ չատ կան \*\*), ուստի հարկաւոր ենք համարում համառօտ բացատրել այդ հակառակորդների ծաղկահատման մասին արած ընդդիմաբանութիւնը:

Ծաղկահատութեան հակառակորդները պնդում են թէ նորա առողջապահական և նախապաշտպանական յատկութիւնները ցոյրք են, նոքա ասում են, թէ և ծաղկահատութեան պաշտպանները աշխատում են վիճակա-

(\*) Վերջին հետազօտութիւններին նայելով պէտքէ ենթադրել, որ կովի ծաղիկը իբրեւ առանձին հիւանդութիւն դիտութիւն չունի եւ թէ մինչև այժմ ընդունված կովի ծաղիկը առաջանում է մարդկային ծաղիկը կովի վերայ պատուաստելուց յետ:

(\*\*) Այս մասին երկու բժիշկների մէջ վէճ բացվեցաւ մեր սոցաւորիկ գրականութեան մէջ անգամ: (Հայկական Աշխարհ, 1877. № 5, 6, 7, 8, 9).



զրական թուերով հաստատել ծաղկահատութեան օգուտը, բայց կարելի չէ այդ թուերի վերայ մեզ յոյս դնել, որովհետեւ ոչ մի տեղ և ոչ մի անգամ վիճակագրական տեղեկութիւնները հարկաւոր ճշգրտութեամբ և զգուշութեամբ չէին հաւաքուիւմ. հակառակորդներն կարծիքով, հիմնվելով այժմեան վիճակագրութեան վերայ, կարելի է առանց այլեւայլութեան հաստատել, որ բոլորովին զանազանութիւններ չկան չպատուաստվողների կամ պատուաստվողների հիւանդանալու յաճախութեան մէջ. նորա նմանապէս ենթադրում են որ իբր թէ պատուաստվածների և չպատուաստվածների հիւանդութեան ընթացքի մէջ ևս զանազանութիւն չկայ և իբր թէ մեռնողների թիւը բոլորովին չէ սակաւացել քանի որ ծաղկահատութիւնը ընդունված է:

Եւ երկրորդ ծաղկահատութեան հակառակորդները աշխատում են համոզել, որ ծաղկահատութիւնը շատ անգամ մանուկների առողջութեան վերայ է ներգործում, նորա պնդում են որ յաջողակ ծաղիկ պատուաստելուց առաջացած մանուկի ընդհանուր հիւանդութիւնը անմասն չէ նորա դեռահաս հասակին և կարող է ծանր խանգարումն պատճառել մանուկի կազմուածքին: Նմանապէս նորա ասում են, որ մանուկներից շատերը հիւանդանում են և մեռնում են կարմիր քամի (рожа) կոչված տկարութենից, որ առաջանում է պատուաստված տեղից և վերջապէս որ ոչ մի մանուկ պաշտպանված չէ ծաղկահատութեան միջոցին վարակվելու դէմ միւս ամենավարակիչ սիֆիլիս հիւանդութեամբ, որի թղչնը պատահմամբ կարող է լինել պատուաստելու ծաղիկ աւշիկի (пима) մէջ:

Յիրաւի որ եթէ վերոյիշված ապացոյցները ճշգրտութեամբ ընդունէինք, պէտքէ վերջին մահաոխիմ վճիռ արտասանենք ծաղկահատութեան մասին. բայց ամսոս որ այդ կարգին պատկանող հակառակորդները մինչև ցայժմ չեն կարողանում հերքել բաւականին ապացոյցներով. դորա պատճառով և այդ երկու հակառակորդ կողմերը չյաջողեց համաձայնեցնել: Յիրաւի որ մինչև վերջին ժամանակ ծաղկով հիւանդանալուն կամ մեռնելուն և կամ ծաղկահատութեան վերաբերեալ տեղեկութիւնները, մի քանի բացառութեամբ, անպիտան են և ոչ ոք չէ կարող դոցանից օգուտ քաղել, ծաղկահատութեան նախապաշտպանողական գորութիւնը հաստատելու համար: Այդ վիճակագրական տեղեկութիւնների դիտաւոր թերութիւնը այն է որ թէ պատուաստված և թէ չպատուաստված հիւանդացողների և մեռնողների թուի մէջ ուշադրութիւն չէ դարձրած թէ որքան պատուաստվածներ և որքան չպատուաստվածներ կան մի որ ևիցէ հասարակութեան մէջ: Ի հարկէ ծաղկահատութեան օգուտը այն ժամանակ միայն կարելի կլինի հաստատել, երբ կերևի, որ համաճարակման ժամանակ հիւանդութեան կամ մահի դէպքերը չպատուաստվածների մէջ աւելի են քան թէ պատուաստվածների մէջ:

Վիճակագրութիւնը մի պակասութիւն ևս ունի, որ ուշադրութեան արժանի է երկու հակառակորդներին ևս. պատճառով է բառի միտքը ոչ մի



տեղ իսկապէս չէ որոշուում, սովորաբար այդ բաժնին վերաբերում են ամենքին, ում որ մի ժամանակ պատուաստված է եղել ծաղիկը, առանց ուշադրութիւն դարձնելու թէ արդեօք ծաղկահատութիւնը յաջող էր կատարված թէ ոչ և թէ քանի միջոց է անցել պատուաստելու օրից: Այդ բառի միտքը անորոշ և շփոթ լինելով բնական է, որ վիճակագրական ցուցանիւնների մէջ պատուաստվածներէ կարգում գտնվում են այնպիսիները, որոնք կարող են անյաջող պատուաստված լինել և կամ այնքան երկար միջոց է անցել ծաղկահատութեան օրից, որ նորա պաշտպանողական զօրութիւնը անցել է և ուրեմն այդ հանգամանքներում պէտք է որ դոքա չպատուաստվածների կարգում համարվին: Եթէ մենք նայենք այդ կողմից այժմեան վիճակագրական տեղեկութիւններին, յիշաւի կհամոզվինք, որ թէ ճիշդ դիտողութիւններ և թէ կանոնաւոր հաւաքված տեղեկութիւններ շատ քիչ են գտնվում: Աւրեմն և բժիշկների թերահաւատ յարաբերութիւնը զէպի այդ տեղեկութիւնների նշանակութիւնը բացատրելի է:

Ինչ և իցէ, չնայելով այդ անպէտք տեղեկութիւններին, կարելի է դոքա մէջ գտնել և այնպիսիներ, որոնք արդարեւ կարողանում են հաստատել ծաղկահատութեան նախապաշտպանողական զօրութիւնը: Օրինակ մտաբերենք մի ամբողջ դարում հաւաքված Հվեցիայի վիճակագրական տեղեկութիւնները, որոնք ցոյց են տալիս, որ XIX դարում շարունակաբար ծաղկից մեռնողների թիւը սակաւացել է, ծաղկահատութեան տարածման համեմատ: Բացի դորանից գտնվում են և այս վերջին ծաղկի համաճարակմանը վերաբերեալ մի քանի վիճակագրական գրաւոր աշխատութիւններ, որոնք անհերքելի հաստատում են, որ չպատուաստվածների մէջ թէ հիւանդացողներ (ծաղկով) թէ մեռնողներ աւելի էին պատահում քան թէ պատուաստվածների մէջ, Պէտք է ասել որ այդ տեղեկութիւնները կանոնաւոր են հաւաքված, հիմնաւոր են և կատարեալ և պէտքէ ընդունել որ դոցանից առաջացած եղրակացութիւնները ևս պիտի որ ճշմարտութեան մօտ լինին:

Այդ հետազոտութիւններից մին է դօկտօր Ֆլինցերի արած 1870—1871 թ. ծաղկի համաճարակման նկարագրութիւնը Խէմնից քաղաքում (Սակսօնիայում) և երկրորդ դօկտօր Միլլերի աշխատութիւնը մի և նոյն համաճարակման մասին Վալդհէյմ քաղաքում:

Խէմնից քաղաքում դօկտօր Ֆլինցերի հետազոտութեամբ երեւցաւ, որ այդ քաղաքի 64253 բնակիչներից գտնվում էին.

53891 պատուաստվածներ (յաջող պատուաստ) 83% (տոկոս)

(կոտորակներն այս թուերից բաց թողված են)

5712 չպատուաստվածներ . . . . . 8%

4652 բնական ծաղիկ ունեցողներ . . . . . 7%

Համաճարակման ժամանակ վարակվեցան 3596 հոգի=5% քաղաքի բնակիչներից, նոցա մէջ գտնվում էին.

953 պատուաստվածներ . . . . . 1% բոլոր պատուաստվածներից.

2643 չպատուաստվածներ . . . . . 57% բոլոր չպատուաստվածներից.



3596 վարակվածներից մեռան 249=6% որոնք են 221 մանուկներ, 14 տարեկանից ցած և միայն 28 չափահասներ: Մեռած մանուկները բոլորովին պատուհաստված չէին, իսկ չափահաս մեռնողներից 21 չէին պատուհաստված: Ուրեմն պատուհաստվածներից մեռան 2%, իսկ չպատուհաստվածներից 97%, ուրիշ բառերով 953 պատուհաստված հիւանդներից մեռան 0, 73% (մին տոկոսի 1/10) և 2643 չպատուհաստված հիւանդներից 9%:

Դոկտոր Միլլերի աշխատութենից երևումէ, որ Վալդհեյմ քաղաքի 5055 բնակիչներից 4713=93% պատուհաստված էին (և բնական ծաղիկ հանողներ) և 342=6% չէին պատուհաստված (անյաջող պատուհաստված): 1872 թ. յունվար ամսից մինչև 1873 թ. ապրիլը վարակվեցան 124=2% պատուհաստվածներից (կամ բնական ծաղիկ ունեցողներից), և 126=36% չպատուհաստվածներից (կամ անյաջող պատուհաստվածներից): Մեռան ծաղիկից 66 մարդ: չպատուհաստվածներից 43%, իսկ պատուհաստվածներից 8%:

Այս տեսակ ճիշդ տեղեկութիւններն ամսոս որ քիչ են բժշկական գրականութեան մէջ և դոքա հաստատումեն, որ համաճարակման ժամանակ չպատուհաստվածներն աւելի են վարակւում և մեռնում քան թէ պատուհաստվածները:

Ծաղկահատման վատ ազդեցութիւնները մանուկների ընդհանուր առողջութեան վերայ չունին ոչ բաւական հաստատողութիւն և ոչ ևս ընդհանուր նշանակութիւն, այդ մասին չունինք ընդարձակ դիտողութիւններ և պէտքէ ասել որ ծաղկահատման հակառակորդների այդ յանդիմանութիւնը կարող է հիմնվել միայն իւրաքանչիւր բժշկի անձնական փորձի վերայ:

Թիրաւի որ պատուհաստվելուց յետ երբեմն պատահումէ կարգէր +մի անուանեալ հիւանդութիւնը, բայց շատ սակաւ, այդ հիւանդութիւնը լինում է սովորաբար կրթարանական տներում (воспитательные дома) և իսկ մասնաւոր բնակարաններում և կամ ընդհանրապէս հասարակական ծաղկահատութեան մէջ շատ քիչ է պատահում:

Ծաղկահատութեան միջոցով սիֆիլիս ախտի տարածումն արդարեւ պատահումէ անհատի (որից վերցնումեն ծաղկապատուհաստման աւշիկը — լիմֆայ) բժշկական ամենազգոյշ քննութիւնը ոչ մի ժամանակ սխալմունքից չէ պահպանում, որովհետեւ ծածուկ սիֆիլիսի դէպքերը (այսինքն սիֆիլիս հիւանդութեան երեւոյթների ժամանակաւոր բացակայութիւնը) բաւական յաճախ են պատահում մարդիկների մէջ, և պէտքէ ասել որ այդ տեսակ սխալմունքը վատ հետեւանքներ են առաջացնում թէ պատուհաստվածի և թէ բժշկի համար: Թէպէտ բժիշկն յանցանք չունի: Այդ հանգամանքը աւելի վնասակար հետեւանքներ պիտի ունենայ այն երկիրներում և քաղաքներում, ուր սիֆիլիսը բաւականաչափ տարածված է և շուտով կարող է հերքել ծաղկահատութեան օգուտը և պակասացնել հասարակութիւն դէպի ծաղկահատութիւն ունեցած համարումն:

Այժմ աշխատում են մարդկային աւշիկի (гуманизированная лимфа) գոր-



ծածուկները սահմանափակել և դորա փոխարեն գործ դնել կենդանական աշիկը (որ ստացվում է մարդկային ծաղիկ պատուաստված կովերից և հորթներից)։ Դժբաղդաբար մինչև այժմ այդ տեսակ փորձառութիւնները յաջողութեամբ չեն վերջացել։ Բորձը ցոյց տուեց որ հորթի աշիկը շատ անգամ լաւ չէ պատուաստվում ( $20 - 30\%$ )։ Իսկ մարդկային աշիկը ընդհանրապէս մեծ մասամբ յաջող է պատուաստվում։ Ուրեմն թէպէտ մի կողմից կենդանական աշիկը պատուաստելով, սիֆիլիսով վարակվելը սահմանափակվում է, բայց միւս կողմից կենդանական աշիկի զօրութիւնը պակաս լինելով շատ անգամ նա անյաջող է պատուաստվում։ պէտքէ յուսալ, որ հետզհետէ կենդանական աշիկի ստանալու եղանակը պիտի որ կատարելագործվի և անյաջող պատուաստման դէպքերը պիտի պակասին։ Բացի դորանից հարկաւոր է միշտ պատուաստել ուղղակի հորթից վերցրած աշիկը, որովհետեւ մինչև այժմ կենդանական աշիկի զօրութիւնը պահպանելու համար դեռ ևս եղանակներ չեն գտել։

Ուրեմն պէտքէ ընդունել որ մարդկային կամ կենդանական ծաղիկ աշիկ պատուաստելը բաւական պահպանումէ մարդին ապագայում երկիւղալի բնական ծաղկով վարակվելուց, թէև այդ նախապաշտպանական զօրութիւնը մի քանի տարուց յետոյ ( $10 - 15$  տարի) նուազում է և պէտքէ այդ միջոցից յետ կրկին պատուաստել։ Մարդից վերցրած լիմֆան ունի աւելի պաշտպանողական դժ քան թէ հորթի լիմֆան։ Բայց նա մասամբ երկիւղալի է, պատճառ որ սիֆիլիսական թոյնը լիմֆայի հետ կարող է լինել ուրեմն և մարդը կարող է սիֆիլիսով վարակվել։

Այդ հանգամանքների վերայ պէտքէ ուշք դարձնել, երբ կամենում են որ և իցէ հասարակութեան մէջ ծաղկահատութիւնը տարածել պարտաւորապէս։

Եթէ տէրութիւնը դիտաւորվումէ պարտաւորական անել ծաղկահատութիւնը, նա միեւնոյն ժամանակ բարոյապէս պարտաւորվումէ պահպանել հասարակութիւնը այն վատ հետեանքներից, որոնք կարող են երեւի ծաղկահատութեան միջոցին։ Միեւնոյն ժամանակ նա պէտք է բարոյապէս համոզէ հասարակութիւնը, որ պարտաւորեալ ծաղկահատութիւնը օգտաւէտ է\*), իբրեւ նախապաշտպանական միջոց ծաղկի դէմ, պէտքէ կազմակերպէ ճիշդ ծաղկական վիճակագրութիւն, որով կարելի կլինէր քննել ծաղկահատման յառաջագիմութիւնը։ Իսկապէս այդ տեսակ աշխատութիւնները պէտքէ պարտաւորական ծաղկահատութիւնը ժողովրդի մէջ մտցնելուց առաջ պատրաստել, բայց ստիպողական պահանջները, ուրիշ բառերով բարոյական հարկաւորութիւնը շատ անգամ հարկադրում է տէրութիւններին այն միջոցներ գործ դնել, որոնց հիմունքը դեռ սակաւ են բացատրված տեսակաբար։ Եւ պէտքէ

(\*) Երրորդ բժշկական միջոցաւային ժողովը 1873 թ. վէնայում. 162 ձայներից 156 բազմութեամբ վճռեց հարկաւոր համարել ծաղկահատութիւնը եւ առաջարկել նորա ցոխողական գործադրութիւնը։



որ այդ կետից նայել ստիպողական ծաղկահատութեան, Ինչ և իցէ մշտական կանոնաւոր կազմակերպւած վիճակագրական դիտողութիւններ, ծաղկահատման ազդեցութեան և ծաղկի համաճարակմունքի ընթացքին վերաբերմամբ, ոչ թէ միայն աւելորդ պէտքէ համարել, այլ ընդհանուր անշուշտ գործադրելի, Բացի դորանից հարկաւոր է աշխատել փոխել լիմֆան, եթէ կարելի լինի, աւելի հաստատ և իսկական, բայց անմիաս նիւթով:

Կրկնածաղկահատութիւնը (ревакцинация) հարկաւոր է շատ վաղ չկատարել, երբեմն նա առանց հետեւանքի է մնում, և վերջը դժուար է որոշել, թէ որին պէտքէ պատուաստած համարել և որին ոչ, կարծես քսաներորդ տարին կրկնածաղկահատութիւնը յարմար է: Համաճարակման մօտենալու ժամանակ պէտքէ աշխատել կրկնածաղկահատել բոլոր զեռահասներին, մօտաւորապէս 10 տարեկանից սկսած: Աւերջապէս հարկաւոր է աւելացնել, որ լաւ կլինէր միմիայն բժիշկները կտրէին ծաղիկը, որոնք կարող են աւելի կատարելութեամբ գործել, բայց ափսոս որ բժիշկները սակաւթիւ լինելով, այժմ դժուար է դորա մասին մտածել: Ուստի պէտքէ առժամանակ այդ գործը յանձնել բացի բժիշկներից, վիրակապներին և դայակներին, որոնց ի հարկէ պէտքէ առաջուց մանրամասնաբար ծանօթացնել ծաղկահատութեան սկզբունքի և նշանակութեան հետ, և վերջապէս նոցա գործունէութիւնը բժիշկները պէտքէ աշխատեն որքան կարելի է վերադիտել:

Գ. Տ. Գ.

### ԱԶԴԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

Երգեցողութիւնն ամեն ժամանակ, ամեն տեղ և ամեն ժողովրդի մէջ առանձին նշանակութիւն ունեցած է: Սորա մասին շատ և շատ անգամ գրւած է: Երգեցողութիւնը և երաժշտութիւնը մեծ, զօրաւոր և օգտաւէտ արհեստ է և այնքան խորհրդաւոր և վսեմ, որ ընդհանուր կարծիքը Աստուծու մօտ բնակող հոգիներին երգօղ և երաժշտօղ կանուանէ:

Բացի ի բնէ չար մարդիկներից, որոնք երգ և երաժշտութիւն չեն սիրում, երգը ամենքի վերայ մեծ ազդեցութիւն և ոյժ ունի, մինչև անգամ անբան կենդանիներն, գաղաններն ևս ոչ միայն կսիրեն երաժշտութիւն, այլ և նորա սաստիկ տպաւորութեանը կենթարկվին:

Սուրբ զիրքը կվկայէ, որ առաջին հնարած արհեստն երգ և երաժշտութիւնն է: Դաւիթ մարգարէն իւր սաղմոսները երգելով կնուագէր: Երգը կրօնի զօրաւոր գործիք էր միշտ և կհամարվի այժմ ևս, որովհետև մարդի սիրտն առ Աստուած կբարձրացնէ: Հին օրէնքի տաճարի մէջ 4000 երաժիշտներ և երգիչներ կային, որոնք սաղմոսերգութիւնը ժողովրդին կվայե-